

## ԱՐԵՒՄՏԵԱՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԼՐԱՅՈՍՔ Երկուշաբթի, 24 Մարտի, 2008

Մարտ 13-ին Կալիֆորնիայի Ծովածոցի շրջանում 106 տարեկանում իր մահկանացուն կնքեց Հայոց Ցեղասպանութիւնից վերապրած վերջին երկու հայերից մէկը՝ Հայկանուշ Մարգարեան-Ազարեանը: Յատկանշելի է, որ անցեալ Հոկտեմբերին, Հայկանուշ Մարգարեանի պատմութիւնը ունկնդրուեց Միացեալ Նահանգների Ներկայացուցիչների Պալատի Արտաքին Յարաբերութիւնների Յանձնաժողովում, ուր քննարկուեց էր Հայոց Ցեղասպանութեանն առնչուող թիւ 106 բանաձեւը: «Մեր համայնքը կազմուած է Հայոց Ցեղասպանութիւնից վերապրած հայերով եւ այդ պատճառով սրտածնիկ է տեսնել նրանց աստիճանական անհետացումը: Նրանք միակ կապերն են մեր եւ 1915 թուականի արհաւիրքի միջեւ, բայց միաժամանակ նրանք հանդիսանում են մեր ժողովրդի վերապրելու եւ վերակառուցելու ոգու խորհրդանիշերը», Հայկանուշ Մարգարեանի մահուան առիթով յայտարարել է ՀՀԴ Սան Ֆրանցիսկոյի Հայ Դատի Յանձնախմբի ատենապետուհի՝ Ռաքսէն Սաքասճեանը, ցաւ յայտնելով, որ Հայկանուշ Մարգարեանը ականատես չեղաւ Ներկայացուցիչների Պալատի կողմից Հայոց Ցեղասպանութեան բանաձեւի վաւերացմանը: Հանգուցեալը ծնուել էր 1902 թուականի Յունուարի 24-ին Խարբերդում: Ցեղասպանութիւնից ճողոպրելուց յետոյ, նա անցել էր Լիբանան, որտեղից տեղափոխուել էր Միացեալ Նահանգներ, ուր իբրեւ գործուն անդամ իր ծառայութիւնն էր մատուցել Հայ Օգնութեան Միութեանը:



ՀՀԴ Ամերիկայի Հայ Դատի Յանձնախմբի եւ «Ցեղասպանութեան միջամտութեան ցանց» կոչուող ցեղասպանութիւնների կանխարգելման ու դադարեցման հարցերով միջազգային կազմակերպութեան համատեղ ջանքերով Մարտի 12-ից 14-ը Միացեալ Նահանգների Կոնգրէսի սրահներից մէկում տեղի է ունեցել յատուկ միջոցառում, որին մասնակցել են մարդու իրաւունքների ջատագովներ եւ ցեղասպանութիւնների դէմ պայքարող գործիչներ: Մասնակցիները, որոնց թոււմ կոնգրէսականներ, իրենց զօրակցութիւնն են յայտնել ԴարՖուրի եւ Հայոց ցեղասպանութիւններին վերաբերող օրինագիծը Միացեալ Նահանգների կողմից վաւերացուելու գործընթացին: Այդ օրինագիծն մաս է կազմում ինչպէս ԴարՖուրի, այնպէս էլ Հայոց Ցեղասպանութեանը վերաբերող թիւ 106 բանաձեւը: «Պէտք է վերջ դրուի ԴարՖուրի ցեղասպանութեանը», - յայտարարել է միջոցառմանը մասնակցած ՀՀԴ Արեւմտեան Ամերիկայի Հայ Դատի Յանձնախմբի գործադիր տնօրէն՝ Անդրանիկ Կիզիրեանը եւ յոյս յայտնել, որ միջոցառման մասնակցիների համատեղ ջանքերով եւ պնդումներով Միացեալ Նահանգների Սենատը եւ Ներկայացուցիչների Պալատը լուրջ քայլեր կը ձեռնարկեն ցեղասպանութիւնների կանխարգելման ու վերջ դրման ուղղութեամբ:



ՀՀԴ Արեւմտեան Ամերիկայի Հայ Դատի Յանձնախմբի ներկայացուցիչները Երկուշաբթի, Մարտի 17-ին մասնակցել են յատուկ ճաշկերոյթ-հաւաքի, որը կազմակերպուել էր Կալիֆորնիայի նահանգային խորհրդարանի նորընտիր նախագահ՝ Քարէն Բասի պատուին: Նա առաջին սեւամորթ կինն է, որ ընտրուել է սոյն պաշտօնին: «Քարէն Բասը ազդեցիկ ու հզօրական կին է, որը լաւագոյն տիպօրինակ է հանդիսանում ամերիկեան կանանց համար՝ քաղաքական գործունէութիւն ծաւալելու եւ նոր նուաճումներ ձեռք բերելու իմաստով», - ասել է հաւաքոյթին մասնակցած Հայ Դատի Յանձնախմբի ներկայացուցիչներից Սուզի Ծերունեանը: Ելոյթ ունենալով միջոցառմանը, տիկին Բասն անդրադարձել է Կալիֆորնիայի նահանգի դիմագրաւած ներկայ մարտահրաւերներին, կենտրոնանալով մասնաւորապէս կրթական բիւրջի կրճատման մտահոգիչ քայլերի վրայ:



Կիրակի, Մարտի 9-ին, Կլենդէլի համայնքային քուէջի մարզահամալիրում տեղի ունեցան ՔԱ.Հ.Ա.Մ.-ի այն է՝ Կալիֆորնիայի Հայ աշակերտական մարզախաղերի եզրափակիչ մրցումները՝ բազմաթիւ անձանց, մասնաւորաբար դպրոցների տնօրէնների, ուսուցիչների եւ

աշակերտների ծնողների քաջալերական ներկայութեամբ: Ամիսներ տեւած մրցումների ընթացքում, զանազան հանգրուաններով կատարուեցին թեթեւ ատլէտի, պինգ-պոնգի, վոլէյբոլի, ճատրակի եւ ֆուտբոլի մարզախաղերը: Եզրափակիչ խաղերին հետեւեց փակման հանդիսաւոր արարողութիւնը, որի ընթացքում Զ.Մ.Ը.Մ.-ի նուագախումբի քայլերանակներով, տողանցք կատարեցին Լոս Անջելոսի «Ռոզ եւ Ալէք Փիլիպոս», «Արի Կիրակոս», «Արշակ Տիգրանեան», «Յովսէփեան», «Շամլեան», «Սահակ Մեսրոպ», «Ֆերահեան», Զ.Բ.Ը.Մ.ի «Մանուկեան-Տէմիրճեան», «Մերտինեան», «Մխիթարեան», «Մեսրոպեան» եւ Հայ Քոյրերի վարժարանների մարզիկ աշակերտները: Այուհետեւ տեղի ունեցաւ առաջնութիւն շահած մարզախմբերի բաժակների յանձնման արարողութիւնը:



Կիրակի, Յունիս 1-ին, Հոլիվուդի «Փոքր Հայաստան» քաղաքամասում, առաւօտեան ժամը 11-ից մինչեւ երեկոյեան ժամը 7-ը տեղի կունենայ Հայաստանի Անկախութեան օրուան նուիրուած ամենամեայ երրորդ փառատօնը: Նախորդ տարիների արձանագրած յաջողութիւններից յետոյ, կազմակերպիչները յուսով են, որ այս տարի կը կարողանան աւելի մեծ թուով մասնակցութիւն ապահովել, համայնքի հովանաւորների եւ Լոս Անջելոսի քաղաքապետական խորհրդի նախագահ Էրիք Գարսեթիի աջակցութեան շնորհիւ:

Այս լուրերը տրամադրուած են  
ՀՅԴ Արեւմտեան Ամերիկայի  
Կեդրոնական Կոմիտէի  
Հանրային Կապի Գրասենեակի կողմից  
ARF Central Committee  
Office of Public Relations  
Contact Person: Saro Nazarian  
[PublicRelations.ARF@hotmail.com](mailto:PublicRelations.ARF@hotmail.com)  
Tel: (818) 243-7059  
Fax: (818) 243-1467

Այս լուրերը տրամադրելի են նաեւ Internet-ով եւ Fax-ով:  
Լուրերը կարելի է վերահրատարակել: